

կը պակսի ձեռագրէն)։ Իսկ 1371 թիւը՝ «Յոհանիսի եհվլա», 1289 թիւ ձեռագիրը՝ «Յոհանիսի¹ վաթլասեա»։ Բարեգեան օրինակի տանց սկզբնատառերն ալ կը յօդեն «Յոհանիսի վաեկ աա»։ Դեռ ուրիշ բնտիր օրինակներ անհրաժեշտ են՝ երեւան հանկու համար ճշգրտոյն բնագիրը²։

*

Հ. Տաշեանի Մայր Յուցակին մէջ (տես ի ցանկն, էջ 1126) Յովհաննէս Երզնկացւոյ անուան ներքեւ ի շարս տաղից կը նշանակուի՝ «Արար Աստուած զմարդն ի հոգոյ», և կը ցուցուի Յուցակին 398 և 851 էջերը։ Նախորդին մէջ Յ. Երզնկացւոյ անուամբ կայ սա խորագրով՝ «Խրատը հոգեւոր և պիտանի Յովաննէս վարդապետի ասացեալ, որ կոչի Պրոպ», և տաղը սա սկզբնաւորութիւնն ունի։ «Արար Աստուած մարմին հոգի, հոգի և մարմին, և զարդարեաց ի նմանութիւն իւր»։ Իսկ յէջ 851 սա սկզբնաւորութեամբ «Արար Աստուած զմարդն հոգի և մարմին, և զարդարեաց ի նմանութիւն իւր»։ Այս զրութիւն՝ որ իբրեւ տաղ կը յիշատակուի՝ կարծեմ արձակ պէտք է ըլլայ։

Հ. Տաշեանի Յուցակէն կ'իմանանք որ Յովհ. Երզնկացւոյ զրութիւնը և տաղը թաթար լեզուով թարգմանուած զը զրուտի իրենց Մատանադարանին մէջ։ Եւ նոթ պիտի ըլլայ ընթերցողաց Յովհաննէս Երզնկացւոյ անուամբ Կ. Կոստանեանցէ հրատարակած «Այս ինչ կրակ էր այրեց» զուարճարան տաղը։ Մեծ. հրատարակչին Ձեռագիր օրինակէն՝ վերջի փոքր մի մասը կը պակսի։ Այս քերթուածին ոճն և լեզուն կ'ապահովցեն ընթերցողը՝ որ այս Յովհաննէս կատակարանը Պրոպը չէ, այլ անոր հայրենակիցը, որ ապահովապէս ժեղարէն վերջ կ'ապրէր։

Հ. Մ. ՊԱՏՈՒԵԱՆ

ԱԶ ԳԱԳՐԱԿԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ

ԳԱՒԱՌԻ «ՇԵՐ»ԵՐ

Նախընթաց խոստումի մը համաձայն, կը փութանք զաւատական Շերերու փունջ մը ներկայացնել բանասէր-գրասէր ընթերցողներուն, որոնք հաճոյք կը զգան ինքնաշատուկ բանաստեղծութեանց այդ փշուրներուն մէջ ըննասիրելու բաներ մը գտնել։

Իրօք ալ, ասոնց մէջ պակաս չեն բնատոհմիկ բարբերու և լեզուի, զգացումի և գաղափարի արտայայտութեան մասնաւոր յատկանիշեր, ընդու ու արտայայտ շեշտեր, որոնք զաւատի հայ կնոջ՝ — խաթուն մաւ միկէն մինչեւ մատղաշ աղջնակին՝ — հոգեկան վիշտերը կը խտացնեն։ Կարծես, անոնց մէջ քիւրիդի պէս կը ցոլանան սիրակցորդ էակի մը մահուան առթիւ իրենց թափած արցունքները ...:

Այս շերերը կամ լացերը մասնաւորապէս Ակնայ մէջ կ'եղբերեգուին, և ուրիշ բան չեն՝ բայց եթէ ողբեր կամ ջայլեր։ Գորս լալազին շեշտելով կ'ողբերգին ըստ պատշաճի և պարագայի։ Մեռելներու վրայ լալու սովորութիւնը շատ հին է։ Տեղեր ալ կը յիշուին՝ ուր մասնաւոր լալկան կը նիկներ (եղբրամայրեր) կան։ Բայց մեզի ծանօթ զաւառներէն և ո՛չ մէկուն մէջ վաճու լալկան բերել տալու սովորութիւն կայ։ Եւ ի՞նչ հարկ ասոր, արդէն ամէն կին ունի իրեն համար լալիք մէկը՝ մեռած կամ բացակայ՝ երկարատեւ պանդխտութեամբ, անոնց յիշատակը միայն կը բաւէ իր բոլի սիրտն ու հոգին խոռվելու և աչքերէն արցունք հոսեցնելու։

Այս լացերէն մեծ մասը հինէն մնացորդ-

1. Այս 1289 Ձեռագիրը փոխանակ «Եամնայն մեղաց»-ի՝ ունի «ամնայն մեղաց»։

2. Մեր նախորդ յօդուածին մէջ Յ. Երզնկացւոյ տա-

ղերուն թիւ տասնի հասուցած էինք՝ անուշադրութեամբ մէջ առնելով Առաքել վարդապետի «Խոյն և զուլի» որ է պարսիկ» աստեղագիտական քերթուածը։

ներ են, բերնէ բերան փոխանցուած՝ տա-
րագի ձեւով, ընդունուած որոշ կադապար-
ներու պէս, որոնց վրայ նորէն ալ յան-
պատրաստից կը զրուցուին՝ վառ երեւա-
կայութեան տէր կիներէ, մեծնորդին տարի-
քին, դերքին և իրենց հետ ունեցած ազ-
գակցութեան կապերուն համեմատ:

Մեծնորդին մերձաւոր կիները երեք օր
շարունակ կը կատարին « շեր կանչելու »
պարտականութիւնը՝ սրտառուչ արարողու-
թեամբ: Մեծելը պատնած՝ կը դնեն սենեա-
կին մէջտեղը, անոր շուրջը կը բոլորուին,
և էն մերձաւորներէն սկսեալ՝ բոլոր կի-
ները իրենց կարգին, փոխն ի փոխ կը
զրուցեն պատշաճ լացը: Տեսարանը շատ
յուզիչ՝ աղիխարշ է: Մեծելատան մէջ կա-
տարուած մեռելական կարգի ընթացու-
մներն ու աղօթքները կ'ընդհատուին այս
ողբերու միջոցին: Բայց դազալը վերցուե-
լէ ետքն ալ, մինչեւ երեք չորս օր, սո-
վորութիւն է կատարել պաշտօնական լա-
ցը, և ամէն անգամ որ ազգական մը,
ծանօթ մը զայ՝ իր ցաւակցութիւնն յայտ-
նելու, նորէն նորէն կը սկսի ողբասացու-
թիւնը:

Աւասիկ այս չերերը որոնց մեծ մասն
անտիպ է. և մէկ մասին ալ վարիանցներ
միայն լոյս տեսած են՝

(Ձորամըն՝ այրիացած փեսիմ կ'ուղղէ)³

Դիժար հիւքնտուկ իմ ես,
Ա՛ռ կամակէ՛ եկո՛ւ իս ի տես.
Կամակը՛ զլիսուս վերայ՝
Ձեռքդ տա՛ր՝ սրտիս խօքը տես:

Եկո՛ւ զրնիմ քեզ սրտիս,
Նայիմ հով տա՛ս կըրակիս.
Կրակ, կըրակովդ իմ ես
Կարօտովդ ծուռ կու գամ ես:
Ինչո՛ւ կու լսա խնդ՛՝ ողորմուկ,
Սիրակա՛նըդ կ'ուզես փափուկ.
Սիրակա՛նդ ան ճամբով ին տարեր
Ո՛ր ան ճամբէն մարդ չէ զարձեր.
Ո՛չ ան ճամբուն ճամբորդն է զարձեր,
Ո՛չ ան ճամբուն աչքն է խնացեր:

Կրակ ինկեր էլիներուն պարերը,
Երթաք ըսէ՛ք թո՛ղ չի բերին մարերը,
Որո՛ւն զառն է մեռեր, որո՛ւն ընկերը,
Ինչո՛ւ, զանտուկ, եկու. ո՛ր ես մընացեր,
Ելեր բարձր լիւր՝ զո՛ւրմ ես մնացեր.
Ձի կայ զալու ճամբայ, հոտ ես մնացեր . . .

(Միւռնող երիտասարդի մը մայրը)

Ես աս զիշեր դուստ ելայ.
Թուի ամպիկ անուշ կու ցողայ.
Յողա՛, Թո՛ւս ամպիկ, ցողա՛,
Չորացեր մօրճ ինձորիս՝
Ձրուելուն աստնն է հիւայ:

(Այրիացած հարսը)

Աս օր իս մի՛ խօսիք, սիրտս քնցուշ է,
Վարդով Թը ուր հով տաք, զետիմ Թը փուշ է.
Դու՛ն ըսէք, զանակ կու լընի,
Դա՛շ ըսէք, սիրտս կ'արօտիս.
Աս օր իս մի՛ խօսիք՝ սրտիկս արո՛ւն է,
Մի՛ բանաց ճիւղիլըս, Խարաս խորո՛ւն է.
Կ'ըսած Թը կ'ենած հոռուս,
Կու վառի, կըրկս է խորանի.
Կրակս ի մորին ինկեր՝
Ձի վառի կանչութենէս.
Մանուկ մեռիլ ինկեր՝
Ձի մեռիլ մանկութենէն:

(Միւռնողիմ մայրը)

Ես ալ կ'երթամ կ'իշիմ եման զետերը,
Գետն ալ իս չի տանիլ՝ միամ եղեր՝³
Արտիկս է շուպուկեր սիրտու նետերը:

(Այրիացած հարսը՝ իր կեսորդ)

Դու՛ն ալ պարծենցա՛ր՝ ըսեր,
« Ձիմ ի տար քեզ զիժարի ».
Քեզ զետն ուր չի՛ տանիլ՝
Ինձ տառն ծովեր կու լընի:
Մարիկ, անօրէն՝ մարիկ,
Անօրէն բանակ մի ալիք.
Իս բերի՛ր՝ տերտի տիւշ արիք,
Շէլիս պարան, ես տըրաք տէր,
Թը քաշիմ, կ'ենլէ հողիս,
Թը չի քաշիմ, ցառի շէլիս . . .

(Միւռնողիմ մայրը՝ այրիացած հարսիմ)

Եկո՛ւր երթանք՝ լեռ ու մօր ծուռ զանց,
Երթանք մենք մեր խարիպը զնինք.
Թը ուր իրենց ալ չի զնինք,
Պարի իրենց հողը պազնինք:
Եկո՛ւր երթանք լեռներն ի վեր,

1. Փափաքելի է որ անոնց ամբողջութիւնն իրենց վա-
րիանցներով հաւացուին ու հրատարակուին:

2. Ջանացած ենք պահել զաւատական հնչումներն և
բոտ այնք ուղղադրել:

3. Վախիմ Թը չի տանի, միամ եղերը:

Ան ու զեղին ծաղիկ մ'է բացուեալ.
Սնեղ զննեք սեւ արտերնսս,
Դնդինը դեղ անինք խոցեմնուս,
Եկուր երթանք լեռներն ի վեր՝
Էս լաւով, զուն փնտհելով.
Ինք չի զննինք, հողը զննինք,
Ապառաժ քարիկն համբարինք,
Ան քարն է մարմարիայ
Տակէն պաղ աղբիւր կու բղխայ.
Քանանք, պտիկ մը իմինք,
Ան ալ մեր մտաւն կու բանայ:

(Այրիթացած հարսը)

Կ'ուզիմ ես ինձի ան մարը՝
Ուր լամ ուր՝ ինք նուազի.
Ինչ անիմ մօրն օտարը,
Ուր Թը լամ, ինք ծիծաղի.
Թը մարիկ էիր իրաւ,
Մահն որդիդ ինտիւր առաւ.
Ուրդուդ ճարակ հեշ չի կայ
Ջրան Թը « Դորէն կու գամ »:
Բսեր է՝ « Վրայ ծիտ
Ան չի ա'հլեղով՝ խաղամ,
Դուրսն ուր մնամ առ զէշեր՝
Կու սորվիմ, դարձ չիմ աներ » . . .

(չարսը՝ իր կենսոյ)

Բարսը լեռը ծուռ եկեր՝
Ջուն եկեր՝ ոտուկն կու մըսի,
Փէշիտ տակը տեղ արէ,
Փէշիտ տակը շրմարիմ,
Վախիմ՝ փէշըդան երթայ,
Ջնանը վրայ մեռնիմ,
(Գնտուրը՝ իր հարսին)
Դուն մի՛ լար, հարմուռ, զուն մի՛ լար,
Դուն կու լա՛ս՝ իմ սիրտս կու լայ.
Էս ախ կենամ գետնին վրայ,
Քեզ ախ պահիմ զխուս վրայ:

(Մեծնոգին զաւկիմ ուղղուած)

Բարսը լեռը ծուռ եկեր՝
Մենք ալ ուր երթանք շամբինք,
Դուն ալ բարկ արեւ լընիս,
Մենք ալ քու շրմ շմաշինք:
(Մեծնոգին մայրը՝ իր մեռած զաւկիմ)
Դուն ուր աս նորաշէն տունն ուր շինեցիր,
Ասոր ալ պառիկուկ զոնակ մի պիտի՛ էր,

1. Միշիկի խաբուն՝ մեռելին տիրոջ անունն է, Ողբի եղանակին մէջտեղ՝ յանկարծ կոչական բառ մը կ'ուղղեն անոր. որուն կը յատկացնեն լացին այս կամ այն տունը: Այնպէս մէջ ի հումն կը գործածուէին արարերէն եւ պարիկներն անկաններ՝ իբրեւ յատուկ անուն (ինչպէս Միշիկի, Խաղիկ, Բացի Ս. Գրքի անուններէ (Ինչպէս Տաւրի, Ողբաւ, եւ այլն):
2. Հնոսրիւնք Անգայ, էջ 498, տե՛ս Վարիանքը:
3. Հնոսրիւնք Անգայ, էջ 487, տե՛ս Վարիանքը:

Ուր անիւ մարիկէ անէր ու ելէր,
Գլխուկ բարձուն անդ բարսը
Ան սողակդ ալ ունէր թորը:

(Միշիկի մայրը՝ իր մեռած զաւկիմ)

Ջէ մեռնի քու որդին՝ չէ՛ մեռնի՝
Ինչե՛ր պահանքն ի վար զոսցեր,
Վարդ է քաղեր՝ զրբը զլիտուն,
Քունն է տարիս՝ անուշ հոտուն,
Խոցը սուրը թաւալուս ուխտ է զնացեր
Վարդ քաղեր՝ զլիտուն զրբը,
Մանուշիկն հոտուն ցնացեր:

(Ուրիշ մը)

Այ իմ սեւ աչիւր տիւրմե
Պայտահն ո՛ր տեղ կու կենայ.
(Միշիկի մայրը՝ իր մեռած զաւկիմ)
Շապկիկդ ուր սեւ է ներկերը՝
Ան զիտէ Թը ի՛ր ախ մընայ՝:

(Մեծնոգին մայրը)

Էս ալ չիմ երթար վարդնուն տակը,
Կոչերէ է մանկիկս զոսալէ տեղ.
Ինչ զիտը կու լընի եղիւմին խակը . . .

(Մայրը՝ իր մեռած զաւկիմ)

Այ իմ կարկըլան կարկուկ,
Կարկըլէ՛, բունիկդ ինձ ցցու՛,
— Բունիկս ապառաժ քար է՝
Կրողին աչեկն ի վրան,
Կարկուկ մի քարին վրան
Կուտ կ'ուտէ՛, արցունք կու թափէ,
— Կարկըլէ, զուն ինչու՛ կու լաւ,
— Բուն չունիմ, ես ո՛ր ախ կենամ,
— Քու բունդ ապառաժ քար է,
Ուր կ'արծառի՛ արեւն ի վրան:

(Մօրը՝ կամ մերձաւորի մը կողմէ)

Տուն է շինի քունն զիմաց,
Դուռն է բացի զքանն զիմաց.
Քահէ՛ լ՝ ալուի տուն շինէ,
Ուր կըլի ծանկէ պահե՛ն Թ:

(Աղջիկ մը՝ իր հայրենի տան կ'ուղղէ)

Աշխարհն ինչ լընի լընի,
Մարունք ասունն աւեր չի լընի,
Աւեր լընի՛ թող լընի,
Թող ճամբուս վրայ չի լընի,
Քանի՛ անց ու դարձ անիմ՝
Սըգեմնիս սիրտս կու բանի:

(Գարծնալ որդեկորոյս մայրը)

Թփիկ մ'ընտհանկ էիր,
Քեզ հաղար նազով սնուցի.
Աւեր բարսը լեռն եկայ՝
Թուսիք ու ի վար մնացի:

Հատաղեք ՍՄԱՐՏ ԴԱՌՆԱՆ